



ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐ և ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳՐԵՐ

ԳՊՀ ՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ նաև՝ ԳՊՀ, Համալսարան) ռեկտորի պաշտոնի անձնագիրը բովանդակում է ռեկտորի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Ռեկտորի հիմնական գործառույթները.

- 1) ղեկավարում է Համալսարանի կրթական, գիտական, տնտեսական, ֆինանսական, միջազգային և այլ գործունեությունը,
- 2) կազմակերպում է Համալսարանի գիտական խորհրդի, ռեկտորատի, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքները՝ ապահովելով դրանց ներդաշնակ գործունեությունը,
- 3) հրավիրում է Համալսարանի գիտական խորհրդի, ռեկտորատի նիստերը,
- 4) տարեկան հաշվետվություն է ներկայացնում Համալսարանի հոգաբարձուների խորհրդին,
- 5) Համալսարանի հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը, զարգացման ռազմավարական ծրագրերը, Համալսարանի կանոնադրության կամ դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին որոշումների նախագծերը, Համալսարանի կառուցվածքը և հաստիքացուցակը,
- 6) ապահովում է Համալսարանի հոգաբարձուների խորհրդի և գիտական խորհրդի որոշումների կատարումը,
- 7) Համալսարանի հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու կամ լուծարելու վերաբերյալ նախագծեր,
- 8) Համալսարանի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (այդ թվում՝ օրինակելի), կանոնակարգերը, ԳՊՀ ներքին կարգապահական կանոնները, այլ ներքին իրավական ակտեր,
- 9) կազմավորում է Համալսարանի գիտական խորհուրդը և կառուցվածքային ստորաբաժանումների կոլեգիալ կառավարման մարմինները, սահմանում է ԳՊՀ աշխատողների լիազորությունները, պաշտոնական պարտականությունները,

10) արձակում է ուսանողների ընդունելության, հեռացման, վերականգնման, համապատասխան արձակուրդ ձևակերպելու, խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր կիրառելու, որակավորման աստիճան շնորհելու, ուսանողական նպաստ հատկացնելու և Համալսարանի գործունեությանը վերաբերող այլ հրամաններ,

11) աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է պրոռեկտորներին, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին, որոշում նրանց գործունեության ոլորտները և իրավասությունը,

12) աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Համալսարանի աշխատողներին,

13) աշխատանքային պայմանագրեր է կնքում դեկանների, ամբիոնների վարիչների և գիտամանկավարժական համակազմի այլ աշխատողների հետ, ինչպես նաև սահմանված կարգով լուծում է պայմանագրերը,

14) ԳՊՀ աշխատողների նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ,

15) ԳՊՀ աշխատողների նկատմամբ կիրառում է կարգապահական տույժեր,

16) կնքում է մինչև քսան միլիոն դրամի կամ դրան համարժեք այլ արտարժույթի չափով պայմանագրեր:

Նշված սահմանաչափը գերազանցող պայմանագրերը ենթակա են հաստատման՝ հոգաբարձուների խորհրդի կողմից.

17) արհեստակցական կազմակերպության նախագահի հետ կնքում է կոլեկտիվ պայմանագիր,

18) կասեցնում է Համալսարանի գիտական խորհրդի, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների կառավարման մարմինների այն որոշումները, որոնք չեն բխում նրանց իրավասությունից, հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն ու ԳՊՀ ներքուհական ակտերին,

19) իր բացակայության ժամանակ ԳՊՀ ռեկտորի պարտականությունների կատարումը հանձնարարում է պրոռեկտորներից մեկին,

20) տալիս է Համալսարանի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում վերալիազորման իրավունքով, բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ,

21) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և Համալսարանի այլ կառավարման մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

2. Ռեկտորն իրավունք ունի՝

1) աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,

2) օգտվել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքից,

3) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ, սույն պաշտոնի անձնագրով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Ռեկտորը պարտավոր է՝

1) իր պարտականությունները կատարել անձամբ,

2) բարեխղճորեն և ժամանակին կատարել գործառույթները, պահպանել աշխատանքային կարգապահությունը,

3) պահպանել ԳՊՀ ներքին կարգապահական կանոնները,

4) կատարել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի և ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,

- 5) իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,
- 6) բարեխղճորեն վերաբերվել ԳՊՀ գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել իրավասու մարմիններին,
- 7) պահպանել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտը և հարակից ոլորտները կարգավորող օրենսդրության, ՀՀ օրենքների և ենթօրենսդրական ակտերի պահանջները,
- 8) բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը Համալսարանում,
- 9) տարեկան գործունեության հաշվետվություն ներկայացնել ԳՊՀ հոգաբարձուների խորհրդին,
- 10) իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Ռեկտորը պատասխանատվություն է կրում.

- 1) ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, ներբուհական ակտերով, սույն պաշտոնի անձնագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ նաև՝ ԳՊՀ, Համալսարան կամ Գործատու) ուսումնագիտական գծով պրոռեկտորի (այսուհետ՝ Աշխատող) պաշտոնի անձնագիրը բովանդակում է Աշխատողի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են.

- 1.1. կատարում է ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտորի պարտականությունները,
- 1.2. կատարում է Համալսարանի ռեկտորի հանձնարարությունները,
- 1.3. ապահովում է Համալսարանի գիտական, հետազոտական, ուսումնական և մեթոդական աշխատանքների պատշաճ կազմակերպումը,
- 1.4. իրականացնում է նաև գիտամանկավարժական գործունեություն՝ կրթական ծրագրերի մշակում և կիրառում, դասախոսությունների, գործնական պարապմունքների, սեմինարների վարում,
- 1.5. ապահովում է ուսանողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ գնահատում,
- 1.6. կատարում է ԳՊՀ կանոնադրությամբ, սույն պաշտոնի անձնագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված այլ գործառույթներ:

2. Աշխատողն իրավունք ունի՝

- 2.1. աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,
- 2.2. օգտվել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքից,
- 2.3. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Աշխատողը պարտավորվում է՝

- 3.1. բարեխղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,
- 3.2. պահպանել ԳՊՀ ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,
- 3.3. պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի և ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,
- 3.4. ԳՊՀ մյուս աշխատակիցներից և ուսանողներից պահանջել՝ պահպանելու Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի և ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,
- 3.5. իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,
- 3.6. բարեխղճորեն վերաբերվել Գործատուի գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,
- 3.7. պահպանել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող և հարակից օրենսդրության պահանջները,
- 3.8. բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը Համալսարանում,
- 3.9. իր պարտականությունները կատարել անձամբ,
- 3.10. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ և Գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում՝

4.1. ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, ներքուհական ակտերով, սույն պաշտոնի անձնագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ նաև՝ ԳՊՀ, Համալսարան կամ Գործատու) տնտեսական գծով պրոռեկտորի (այսուհետ՝ Աշխատող) պաշտոնի անձնագիրը բովանդակում է Աշխատողի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են՝

- 1.1. կատարում է ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտորի պարտականությունները,
- 1.2. կատարում է Համալսարանի ռեկտորի հանձնարարությունները,
- 1.3. ապահովում է Համալսարանի տնտեսական աշխատանքների պատշաճ կազմակերպումը,
- 1.4. կարող է իրականացնել նաև գիտամանկավարժական գործունեություն՝ կրթական ծրագրերի մշակում և կիրառում, դասախոսությունների, գործնական պարապմունքների, սեմինարների վարում,
- 1.5. ապահովում է ուսանողների գիտելիքների ընթացիկ և ամփոփիչ ստուգում և գնահատում,

1.6.կատարում է ԳՊՀ կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, սույն պաշտոնի անձնագրով նախատեսված այլ գործառույթներ:

2. Աշխատողն իրավունք ունի՝

2.1.աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,

2.2.օգտվել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքից,

2.3.իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Աշխատողը պարտավորվում է՝

3.1.բարեխղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,

3.2.պահպանել ԳՊՀ ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

3.3.պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի, ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,

3.4.իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,

3.5.բարեխղճորեն վերաբերվել Գործատուի գույքին, հետևել աշխատակիցների, այլ անձանց կողմից գույքի պատշաճ օգտագործմանը, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,

3.6.պահպանել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսդրության պահանջները,

3.7.բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը Համալսարանում,

3.8.հետևել ԳՊՀ վարչատնտեսական, տեխնիկական անձնակազմի անդամների կողմից իրենց պարտականությունների հստակ, ժամանակին և բարեխիղճ կատարմանը,

3.9. իր պարտականությունները կատարել անձամբ,

3.10.իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն պաշտոնի անձնագրով և Գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում.

4.1.ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն պաշտոնի նկարագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև ԳՊՀ, Համալսարան կամ Գործատու) դեկանի (այսուհետ՝ նաև Աշխատող) պաշտոնի անձնագիրը ներառում է Աշխատողի հիմնական լիազորությունները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են՝

- 1) ղեկավարում է ֆակուլտետի գործունեությունը կրթական, գիտական, ուսումնամեթոդական, արտաքին կապերի և այլ ոլորներում,
- 2) ապահովում է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի որոշումների, ԳՊՀ ռեկտորի հրամանների, ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը,
- 4) ԳՊՀ ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ղեկանի տեղակալի, ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածությունները,
- 5) սահմանված կարգով ԳՊՀ ռեկտորին առաջարկություններ է ներկայացնում ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու, փոխատեղման, ներհամալսարանական, միջբուհական տեղափոխության վերաբերյալ,
- 6) վերահսկում է ֆակուլտետի ուսումնական գործընթացը,
- 7) համակարգում է ուսումնական պարապմունքների դասացուցակների կազմման և կատարման գործընթացները,
- 8) վերահսկում է քննությունների և ստուգարքների անցկացման գործընթացը,
- 9) առաջարկություններ է ներկայացնում ԳՊՀ ռեկտորին՝ ֆակուլտետի աշխատակիցներին և ուսանողներին խրախուսելու, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,
- 10) պատասխանատվություն է կրում ֆակուլտետին հատկացված գույքի, նյութական միջոցների պատշաճ օգտագործման համար,
- 11) կազմակերպում և անցկացնում է ֆակուլտետի խորհրդի, ղեկանատի նիստեր, միջամբիոնային խորհրդակցություններ, գիտական և գիտամեթոդական խորհրդակցություններ և սեմինարներ,
- 12) լուծում է ֆակուլտետի կանոնադրությունից բխող և ֆակուլտետի ուսումնամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ խնդիրներ:

2. Աշխատողն իրավունք ունի՝

- 1) Աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,
- 2) օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը,
- 3) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

3 Աշխատողը պարտավորվում է՝

- 1) բարեխղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,
- 2) պահպանել ԳՊՀ ներքին կարգապահական կանոնները,
- 3) ֆակուլտետում հետևել աշխատանքային կարգապահությանը,
- 4) պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի և ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,
- 5) հետևել ֆակուլտետի ուսանողների և աշխատակիցների կողմից ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի պահանջների, էթիկայի նորմերի կատարմանը,
- 6) իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, ՀՀ օրենսդրությանը համապատասխան կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,

- 7) հանդես գալ որպես ֆակուլտետին տրամադրված գույքի պատասխանատու անձ, նյութական պատասխանատվություն կրել ֆակուլտետին հասցված գույքային վնասի դեպքում,
- 8) հետևել, որպեսզի ֆակուլտետի ուսանողներն ու աշխատակիցները բարեխղճորեն վերաբերվեն գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,
- 9) իր պարտականությունները կատարել անձամբ,
- 10) պահպանել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող և հարակից օրենսդրության պահանջները,
- 11) բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը ֆակուլտետում,
- 12) իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ և Գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում.

- 1) ՀՀ օրենսդրությամբ, Գործատուի կանոնադրությամբ, սույն պաշտոնի նկարագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև ԳՊՀ կամ Գործատու) ամբիոնի վարիչի (այսուհետ՝ Աշխատող) պաշտոնի անձնագիրը ներառում է Աշխատողի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են.

- 1.1. ղեկավարում է ամբիոնի ուսումնական, մեթոդական, գիտահետազոտական և այլ գործունեությունը,
- 1.2. կազմակերպում է ամբիոնի աշխատանքները համապատասխան մասնագիտության ուղղությամբ,
- 1.3. կազմակերպում և մշակում է մասնագիտական կրթական ծրագրերը, համապատասխան ուսումնական պլանները, հետևում է ընդհանուր և մասնագիտական դասընթացների ծրագրերի մշակմանը, դասավանդողների ուսումնական ծանրաբեռնվածության և անհատական պլանի իրականացմանը,
- 1.4. ապահովում է ամբիոնի ուսումնամեթոդական ապահովվածությունը,
- 1.5. ապահովում է ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի, ռեկտորատի, ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը,
- 1.6. պատասխանատու է սովորողների ուսման որակի համար. հետևում է համապատասխան մասնագիտության գծով քննական և լուծարային շրջանի, ամփոփիչ ատեստավորման արդյունքներին և կազմում դրանց վերաբերյալ հաշվետվություններ, ապահովում է բարելավման գործընթացներ,
- 1.7. պատասխանատվություն է կրում ամբիոնի նյութատեխնիկական բազայի, ուսումնական ռեսուրսների պահպանման համար,
- 1.8. կատարում է այլ գործառույթներ:

2. Աշխատողն իրավունք ունի՝

- 2.1. աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,
- 2.2. օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքից,
- 2.3. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Աշխատողը պարտավորվում է՝

- 3.1. բարեխղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,
- 3.2. պահպանել Գործատուի ներքին կարգապահական կանոնները, ամբիոնում հետևել աշխատանքային կարգապահությանը,
- 3.3. պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի, ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,
- 3.4. իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, ՀՀ օրենսդրությանը համապատասխան կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,
- 3.5. բարեխղճորեն վերաբերվել Գործատուի գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,
- 3.6. իր պարտականությունները կատարել անձամբ,
- 3.7. պահպանել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները,
- 3.8. բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը Համալսարանում,
- 3.9. իրականացնել ԳՊՀ կանոնադրությամբ, Գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրով, սույն պաշտոնի անձնագրով, ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում.

- 4.1. ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն պաշտոնի անձնագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև ԳՊՀ կամ Գործատու) լաբորատորիայի վարիչի (այսուհետ՝ Աշխատող) պաշտոնի անձնագիրը ներառում է Աշխատողի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են.

- 1.1 պատասխանատվություն է կրում լաբորատոր սարքավորումների աշխատունակության պահպանման և լաբորատոր աշխատանքների կատարման համար,
- 1.2 մասնակցում է լաբորատոր բազայի զարգացման ծրագրի մշակմանը, նոր լաբորատոր սարքերի ու սարքավորումների տեղադրմանը և գործողների նորացմանը,

1.3 մասնակցում է լաբորատոր աշխատանքների և ամբիոնի մեթոդական նյութերի մշակմանը և բարելավմանը,

1.4 անձնական պատասխանատվություն է կրում հակահրդեհային, տեխնիկական, սանիտարական անվտանգության կանոնների պահպանման, լաբորատոր սենյակների պատշաճ վիճակի ապահովման համար,

1.5 անձնական պատասխանատվություն է կրում լաբորատորիայում առկա նյութական արժեքների պահպանության համար

1.6 կատարում է ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, Գործատուի հետ կնքած պայմանագրով և սույն պաշտոնի անձնագրով նախատեսված այլ գործառույթներ:

2. Աշխատողն իրավունք ունի՝

2.1. աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,

2.2. պահանջել Գործատուից ապահովել աշխատանքի համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններ,

2.2. օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքից,

2.3. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Աշխատողը պարտավորվում է՝

3.1. բարեխղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,

3.2. մասնակցել ԳՊՀ լաբորատոր բազայի բարելավման աշխատանքներին,

3.3. պահպանել Գործատուի ներքին կարգապահական կանոնները,

3.4. պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի, ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,

3.5. իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, ՀՀ օրենսդրությանը համապատասխան կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,

3.6. բարեխղճորեն վերաբերվել Գործատուի գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,

3.7. իր պարտականությունները կատարել անձամբ,

3.8. բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը Համալսարանում:

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում.

4.1. ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն պաշտոնի անձնագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԻ ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև ԳՊՀ կամ Գործատու) ուսանողի գիտական ղեկավարի (այսուհետ՝ Աշխատող) պաշտոնի անձնագիրը

նախատեսում է Աշխատողի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են.

1.1. հաստատված թեմայի շրջանակներում ուսանողի՝ բակալավրի, մագիստրոսի, ասպիրանտի (այսուհետ՝ Ուսանող) հետ համատեղ, ավարտական աշխատանքի, մագիստրոսական թեզի, ատենախոսության (այսուհետ՝ Աշխատանք) անհատական պլանի կազմումը, ուսումնասիրության առարկայի և մեթոդների հստակեցումը, նպատակի և խնդիրների ձևակերպումը,

1.2. Ուսանողին ուղղորդումը՝ անհրաժեշտ մասնագիտական գրականության, տեղեկատվական, արխիվային աղբյուրների և տվյալների վերլուծության ծրագրային փաթեթների և այլ անհրաժեշտ նյութերի ընտրության հարցերում,

1.3. Աշխատանքի ընթացքի ղեկավարումը, ստացված արդյունքների հավաստիության ստուգումը,

1.4. Ուսանողին Աշխատանքի արդյունքների ամփոփման և եզրակացությունների, առաջարկությունների ձևակերպման հարցերում աջակցության ցուցաբերումը,

1.5. Աշխատանքի բովանդակային ամբողջականության ապահովման, տեխնիկական պահանջների պահպանման, գրագողության բացառման նկատմամբ հսկողության իրականացումը,

1.6. Ուսանողի կողմից Աշխատանքի կատարման ժամկետների խախտման, սահմանված պահանջների չկատարման դեպքերում համապատասխան ամբիոնին տեղեկացումը,

1.7. ամբիոնին սահմանված ժամկետներում Աշխատանքի վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվությունների (ատենախոսության դեպքում՝ ատեստավորման հաշվետվության) ներկայացումը,

1.8. սահմանված ձևաչափով Աշխատանքի վերաբերյալ կարծիքի ներկայացումը,

1.9. Աշխատանքը պաշտպանության երաշխավորելը (կամ չերաշխավորելը),

1.10. Ուսանողին գիտական հոդվածներ պատրաստելու և հրատարակման ներկայացնելու հարցերում աջակցության ցուցաբերումը:

2. Աշխատողն իրավունք ունի՝

2.1. աշխատանքի դիմաց ստանալու համարժեք վարձատրություն,

2.2. օգտվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված հանգստի իրավունքից,

2.3. իրականացնելու ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Աշխատողը պարտավորվում է՝

3.1. բարեխղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,

3.2. պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի, ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,

3.3. պահպանել Գործատուի ներքին կարգապահական կանոնները, սանիտարական, հակահամաճարակային անվտանգության նորմերը,

3.4. բարեխղճորեն վերաբերվել Գործատուի գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,

3.5. իր պարտականությունները կատարել անձամբ,

3.6. պահպանել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները,

3.7. բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը Համալսարանում,

3.8. իրականացնել ԳՊՀ կանոնադրությամբ, Գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրով, սույն պաշտոնի անձնագրով, ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում.

4.1. ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն պաշտոնի անձնագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ՝ ոչ բարեխիղճ, ոչ ժամանակին կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ՓՈԽԴԵԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև՝ ԳՊՀ կամ Գործատու) փոխդեկանի (այսուհետ՝ Աշխատող) պաշտոնի անձնագիրը ներառում է Աշխատողի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են.

1.1. կազմակերպում է մասնագիտական կրթական ծրագրերի և համապատասխան ուսումնական պլանների անխափան կատարումը ֆակուլտետում,

1.2. ապահովում է դեկանատի պատրաստվածությունը՝ կազմակերպելու ուսումնական գործընթացը,

1.3. համակարգում է դեկանատի գործավարի և ամբիոնների լաբորանտների աշխատանքները,

1.4. հսկում է ուսանողների կողմից քննական և լուծարքային շրջանի հանձնման գործընթացը և դրանց վերաբերյալ կազմում հաշվետվություններ,

1.5. մասնակցում է ֆակուլտետի խորհրդի նիստերին, Համալսարանի կամ ֆակուլտետի կողմից նախատեսված միջոցառումներին,

1.6. ապահովում է ֆակուլտետի ուսումնական և մեթոդական աշխատանքների պատշաճ կազմակերպումը,

1.7. կատարում է ֆակուլտետի դեկանի հանձնարարությունները,

1.8. կատարում է պաշտոնի անձնագրով նախատեսված այլ գործառույթներ:

2. Աշխատողն իրավունք ունի՝

2.1. աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,

2.2. օգտվել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքից,

2.3. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Աշխատողը պարտավորվում է՝

3.1. բարեխիղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,

3.2. պահպանել Գործատուի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

3.3. պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի, ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,

3.4.իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,

3.5.բարեխղճորեն վերաբերվել Գործատուի գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,

3.6.իր պարտականությունները կատարել անձամբ,

3.7.պահպանել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները,

3.8.բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը Համալսարանում,

3.9.իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն պաշտոնի անձնագրով և Գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում.

4.1.ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն պաշտոնի անձնագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև ԳՊՀ կամ Գործատու) բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի կրթական աստիճաններում աշխատող դասախոսի (այսուհետ՝ Աշխատող) պաշտոնի անձնագիրը ներառում է Աշխատողի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են.

1.1 իրականացնում է դասախոսական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական գործունեություն,

1.2 նախապատրաստում և անցկացնում է դասախոսություններ, գործնական պարապմունքներ, սեմինարներ,

1.3 կազմակերպում է կուրսային աշխատանքների, ինքնուրույն աշխատանքների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմաների առաջադրումը, աշխատանքների վարումը, ընդունումը, ստուգումը, գնահատումը,

1.4 ապահովում է ուսանողների գիտելիքների ընթացիկ, միջանկյալ և ամփոփիչ գնահատումը,

1.6 մասնակցում է իրականացվող մասնագիտական կրթական ծրագրի մշակմանը, ինչպես նաև մշակում է իր կողմից դասավանդվող դասընթացի /դասընթացների/ առարկայական ծրագիրը /ծրագրերը/,

1.7 մասնակցում է ԳՊՀ ինքնավերլուծության գործընթացներին,

1.5.կատարում է ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, Գործատուի հետ կնքած պայմանագրով և սույն պաշտոնի անձնագրով նախատեսված այլ գործառույթներ:

2. Աշխատողն իրավունք ունի՝

- 2.1. աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,
- 2.2 պահանջել Գործատուից ապահովել աշխատանքի համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններ,
- 2.2. օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքից,
- 2.3. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Աշխատողը պարտավորվում է՝

- 3.1. բարեխղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,
- 3.2. մասնակցել ամբիոնի նիստերին, ամբիոնային աշխատանքներին,
- 3.3. պահպանել Գործատուի ներքին կարգապահական կանոնները,
- 3.4. պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի, ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,
- 3.5. իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, ՀՀ օրենսդրությանը համապատասխան կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,
- 3.6. բարեխղճորեն վերաբերվել Գործատուի գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,
- 3.7. իր պարտականությունները կատարել անձամբ,
- 3.8. բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը Համալսարանում,
- 3.9. պահպանել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները,

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում.

- 4.1. ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն պաշտոնի անձնագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ՌԵԿՏՐՈՐԱՏԻ ԳՈՐԾԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի ռեկտորատի (այսուհետ՝ նաև ԳՊՀ կամ Գործատու) գործավարի (այսուհետ՝ Աշխատող) աշխատանքի նկարագիրը ներառում է Աշխատողի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են.

- 1.1. ապահովում է պատշաճ գործավարությունը ռեկտորատում,
- 1.2 կատարում է ռեկտորի, պրոռեկտորների հանձնարարությունները,
- 1.3. կազմակերպում է ռեկտորատի փաստաթղթաշրջանառությունը,
- 1.4. ստանում և մուտքագրում է նամակներ, դիմումներ, հարցումներ, այլ փաստաթղթեր,
- 1.5. ելքագրում է պատասխան գրություններ, նամակներ, հարցումներ, այլ փաստաթղթեր,
- 1.6. իրականացնում է ռեկտորատի գործավարության հետ կապված այլ գործառույթներ:

2. Աշխատողն իրավունք ունի՝

- 2.1. աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,
- 2.2. օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքից,
- 2.3. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Աշխատողը պարտավորվում է՝

- 3.1. բարեխղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,
- 3.2. պահպանել Գործատուի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,
- 3.3. պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի և ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,
- 3.4. իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,
- 3.5. բարեխղճորեն վերաբերվել Գործատուի գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,
- 3.6. իր պարտականությունները կատարել անձամբ,
- 3.7. պահպանել ՀՀ-ում գործավարության և փաստաթղթաշրջանառության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները,
- 3.8. բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը Համալսարանում,
- 3.9. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն աշխատանքի նկարագրով և Գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում.

- 4.1. ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն աշխատանքի նկարագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ԴԵԿԱՆԱՏԻ ԳՈՐԾԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև ԳՊՀ կամ Գործատու) ղեկանատի գործավարի (այսուհետ՝ Աշխատող) աշխատանքի նկարագիրը ներառում է Աշխատողի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են.

- 1.1. ապահովում է պատշաճ գործավարությունը ֆակուլտետի ղեկանատում,
- 1.2. կատարում է ֆակուլտետի ղեկանի, նրա տեղակալի հանձնարարությունները,
- 1.3. ստանում և մուտքագրում է ֆակուլտետի ղեկանին հասցեագրված դիմումներ, հարցումներ, այլ փաստաթղթեր,
- 1.4. ելքագրում է պատասխան գրություններ, նամակներ, հարցումներ, այլ փաստաթղթեր,
- 1.5. իրականացնում է ղեկանատի գործավարության հետ կապված այլ գործառույթներ:

2. Աշխատողն իրավունք ունի՝

- 2.1. աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,
- 2.2. օգտվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքից,
- 2.3. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Աշխատողը պարտավորվում է՝

- 3.1. բարեխղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,
- 3.2. պահպանել Գործատուի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,
- 3.3. պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի և ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,
- 3.4. իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,
- 3.5. բարեխղճորեն վերաբերվել Գործատուի գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,
- 3.6. իր պարտականությունները կատարել անձամբ,
- 3.7. պահպանել ՀՀ-ում գործավարության և փաստաթղթաշրջանառության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները,
- 3.8. բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը Համալսարանում,
- 3.9. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն աշխատանքի նկարագրով և Գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում.

- 4.1. ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն աշխատանքի նկարագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ԱՄԲԻՈՆԻ ԼԱԲՈՐԱՆՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև ԳՊՀ կամ Գործատու) լաբորանտի (այսուհետ՝ Աշխատող) աշխատանքի նկարագիրը ներառում է Աշխատողի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են.

- 1.1. կատարում է համապատասխան ամբիոնի լաբորանտի պարտականությունները,
- 1.2. կատարում է համապատասխան ամբիոնի վարիչի հանձնարարությունները,
- 1.3. ապահովում է ամբիոնի աշխատանքների պատշաճ կատարումը,
- 1.4. կատարում է ուսումնական խորհրդատուի պարտականությունները,
- 1.5. իրականացնում է աշխատանքային պայմանագրով նախատեսված այլ գործառույթներ:

2. Աշխատողն իրավունք ունի՝

- 2.1. Աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,

2.2. պահանջել գործատուից ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը,

2.3. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Աշխատողը պարտավորվում է՝

3.1. բարեխղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,

3.2. պահպանել Գործատուի ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը,

3.3. պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի և ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,

3.4. պահպանել աշխատանքի սահմանված նորմերը,

3.5. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնները,

3.6. բարեխղճորեն վերաբերվել Գործատուի գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,

3.7. իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,

3.8. պահպանել ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները, բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը ԳՊՀ-ում,

3.9. իր պարտականությունները կատարել անձամբ

3.10. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն աշխատանքի նկարագրով և Գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում.

4.1. ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն աշխատանքի նկարագրով և աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ենթարկվել պատասխանատվության օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև ԳՊՀ կամ Գործատու) մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի (այսուհետ՝ Բաժին) վարիչի (այսուհետ՝ Աշխատող) պաշտոնի անձնագիրը ներառում է Աշխատողի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են.

1.1. ղեկավարում է Բաժնի ընթացիկ գործունեությունը,

1.2. կատարում է աշխատանքի բաժանում Բաժնի աշխատակիցների միջև,

1.3. ստորագրում է Բաժնի կողմից ներկայացվող փաստաթղթերը,

- 1.4. ապահովում է Բաժնի գործառույթների շրջանակում զեկուցագրեր, տեղեկանքներ, առաջարկություններ և այլ փաստաթղթեր կազմելու և ներկայացնելու գործընթացը,
- 1.5. մասնակցում է ԳՊՀ ռեկտորի և պրոռեկտորի կողմից հրավիրվող համապատասխան նիստերին, խորհրդակցություններին,
- 1.6. իր իրավասությունների շրջանակում ստանում է ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումներից անհրաժեշտ տեղեկատվություն, փաստաթղթեր,
- 1.7. ապահովում է Բաժնի կողմից իրականացվող աշխատանքների որակը, առաջադրված խնդիրների պատշաճ և արդյունավետ լուծումը,
- 1.8. ՀՀ օրենսդրության, ԳՊՀ համապատասխան կանոնակարգերի շրջանակում նախապատրաստում է ԳՊՀ ռեկտորի հրամանների նախագծեր, ապահովում է հրամանագրքերի կազմումը և պահպանումը,
- 1.9. կազմում է ԳՊՀ աշխատողների անձնական գործերը, կատարում համապատասխան փոփոխություններ, կազմում աշխատանքային պայմանագրեր,
- 1.10. ԳՊՀ գիտական խորհրդին ներկայացնում է Բաժնի գործունեության տարեկան հաշվետվություն,
- 1.11. իրականացնում է հատուկ բաժնին վերապահված գործառույթներ,
- 1.12. իրականացնում է ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն պաշտոնի անձնագրով և Գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ:

2. Աշխատողն իրավունք ունի՝

- 2.1. աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,
- 2.2. պահանջել գործատուից ապահովել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը,
- 2.3. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Աշխատողը պարտավորվում է՝

- 3.1. բարեխղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,
- 3.2. պահպանել Գործատուի ներքին կարգապահական կանոնները, հետևել աշխատանքային կարգապահությանը,
- 3.3. պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի, ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,
- 3.4. իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, ՀՀ օրենսդրությանը համապատասխան կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,
- 3.5. բարեխղճորեն վերաբերվել Գործատուի գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,
- 3.6. իր պարտականությունները կատարել անձամբ,
- 3.7. պահպանել ՀՀ մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները,
- 3.8. բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը Համալսարանում,

3.9.իրականացնել ԳՊՀ կանոնադրությամբ, ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, սույն պաշտոնի անձնագրով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում.

4.1.ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն պաշտոնի անձնագրով և Գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱԺԻ ՏԵՍՈՒՉԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ նաև ԳՊՀ կամ Գործատու) մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի տեսուչի (այսուհետ՝ Աշխատող) աշխատանքի նկարագիրը ներառում է Աշխատողի հիմնական գործառույթները, իրավունքները, պարտականությունները և պատասխանատվության հիմքերը:

1. Աշխատողի հիմնական գործառույթներն են.

1.1.իրականացնում է ԳՊՀ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի գործառույթները,

1.5.կատարում է բաժնի վարիչի հանձնարարությունները,

1.6.կատարում է ԳՊՀ աշխատողների անձնական գործերի վարման, համապատասխան փաստաթղթերի նախագծերի կազմման և այլ գործառույթներ:

2. Աշխատողն իրավունք ունի՝

2.1. աշխատանքի դիմաց ստանալ համարժեք վարձատրություն,

2.2.պահանջել գործատուից ապահովել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված իր հանգստի իրավունքը,

2.3. իրականացնել ՀՀ օրենսդրությամբ իրեն վերապահված այլ իրավունքներ:

3. Աշխատողը պարտավորվում է՝

3.1.բարեխղճորեն կատարել իր ստանձնած աշխատանքային պարտականությունները,

3.2.պահպանել Գործատուի ներքին կարգապահական կանոնները, հետևել աշխատանքային կարգապահությանը,

3.3.պահպանել Գավառի պետական համալսարանի ակադեմիական ազնվության հայեցակարգի, հակակոռուպցիոն ծրագրի, ԳՊՀ էթիկայի կանոնների պահանջները,

3.4.իր պարտականությունների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, ՀՀ օրենսդրությանը համապատասխան կատարել աշխատանք՝ ոչ աշխատանքային և տոնական օրերին,

3.5.բարեխղճորեն վերաբերվել Գործատուի գույքին, դրան սպառնացող վտանգի մասին անմիջապես տեղեկացնել Գործատուին,

3.6.իր պարտականությունները կատարել անձամբ,

3.7. պահպանել ՀՀ մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջները,

3.8.բացառել քաղաքական, կրոնական կազմակերպությունների և միավորումների գործունեությունը Համալսարանում,

3.9.իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ իրեն վերապահված այլ պարտականություններ:

4. Աշխատողը պատասխանատվություն է կրում.

4.1.ՀՀ օրենսդրությամբ, ԳՊՀ կանոնադրությամբ, սույն աշխատանքի նկարագրով և Գործատուի հետ կնքած աշխատանքային պայմանագրով նախատեսված իր աշխատանքային պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

ԳՊՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

